Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՆՈՒՇ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ I ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

01.07.2014թ-ին Մրգանուշ գյուղական համայնքում տեղի ունեցավ հանրային լսում, որը նախագահում էր համայնքի ղեկավար Մ.Սարգսյանը, քարտուղարում էր աշխատակազմի քարտուղար Ա.Սահակյանը:

Մասնակցում էին ՀՀ Արարատի մարզպետարանի ներկայացուցիչ Հասմիկ Դանիելյանը, ավագանու անդամներ, գյուղապետարանի աշխատակազմը, նախակրթարանի, դպրոցի տնօրենն ու աշխատակիցները, համայնքի բնակիչները:

ԼՍԵՑԻՆ- Արարատի մարզի Մրգանուշ համայնքի ղեկավար Մ.Սարգսյանի հաշվետվությունը 2014 թվականի I կիսամյակում կատարած աշխատանքների վերաբերյալ:

ԱՐՁԱՆԱԳՐՎԵՑ, որ

2014թ-ի I կիսամյակի ընթացքում Մրգանուշ գյուղական համայնքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

Գյուղապետարանը բնակիչներից ստացել է 39 դիմում, ինչպես նաև բանավոր հարցումներ, որոնք քննարկվել են համայնքի ղեկավարի աշխատակազմի և ավագանու նիստերի ժամանակ և տրվել են համապատասխան լուծումներ:

Գյուղապետարանը բնակիչներին տվել է 187 տեղեկանք, ստացել 26 պաշտոնական նամակ մարզպետարանից և տարբեր կազմակերպություններից, որոնք քննարկվել են սահմանված ժամկետներում, տրվել պատասխաններ:

Կիսամյակի ընթացքում կազմակերպվել են համայնքի վարչական տարածքում սանմաքրման աշխատանքներ, որոնք կրել են պարբերական բնույթ:

- Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել են հողամասերի չափագրման , սահմանների ճշգրտման, հողատեսքերի փոփոխման և ձևակերպման աշխատանքներ:
- 2014թ-ի համայնքի բյուջեի սեփական եկամուտները 30.06.2014թ-ի դրությամբ ըստ հետևյալ հարկատեսակների կազմել են՝
  ա/ հողի հարկ 1394.2 հազ.դրամ
  բ/ գույքահարկ 630.0 հազ.դրամ
  գ/ տեղական տուրք 250.0 հազ.դրամ
  դ/ոչ հարկային եկամուտներ 17.0 հազ.դրամ
- Համայնքում իրականացվել են մի շարք սոցիալ-տնտեսական միջոցառումներ և ծրագրեր.
  ա/համայնքում նշվել է մայիսի 9-ը՝ Հայրենական Մեծ պատերազմի հաղթանակի և Շուշիի ազատագրման օրը ,I հանրապետության կազմավորման օրը,երեխաների պաշտպանության օրը 120.0 բ/համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին տրվել է 700,0 հազար դրամի ֆինանսական աջակցություն

գ/ աղբահանման աշխատանքների կազմակերպման համար հատկացվել է 400.0 հազար դրամ
դ/թաղման ծախս `245,0 հազար դրամ
ե/ նվիրատվություն հասարակական կազմակերպություններին`50,0 հազ.դրամ

Համայնքը խիստ կարիք ունի ոռոգման ջրի ցանցերի և գյուղամիջյան ճանապարհների վերանորոգման: Այդ նպատակով ձեռնարկվում են միջոցառումներ:

Համայնքապետարանի ղեկավար՝ Մ.Սարգսյան